ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5735-Ա «24» նոյեմբերի 2026թ.

ԱՎԱՆԻ ԱՂԻ ԿՈՄԲԻՆԱՏԻ ԼԵՌՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ
ԳՏՆՎՈՂ Հ.96 ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ
ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել ՀՀ վարչական դատարանի վարչական գործ թիվ ՎԴ/5769/05/22 վճիռը և Արծրուն Մարգարյանի լ/ա Վարդան Մարգարյանի դիմումը՝ Ավանի Աղի հանքի լեռնային տարածքում գտնվող հ.96 հողամասի սահմանները ճշտելու և հատակագիծ թողարկելու մասին:

Երևան քաղաքի ՀՀ վարչական դատարանի 2024 թվականի հուլիսի 4-ին կայացրած և օրինական ուժի մեջ մտած ՎԴ/5769/05/22 վճռով Երևանի քաղաքապետարանին պարտավորեցվել է ընդունել բարենպաստ վարչական ակտ՝ Ավանի Աղի հանքի լեռնային տարածքում գտնվող հ.96 հողամասի սահմանները ճշտելու և հողամասի հատակագիծ տրամադրելու վերաբերյալ:

Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն՝ քննարկվող հողամասը գտնվում է բնակավայրերի բնակելի կառուցապատման գոտում:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2020թ. հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 7-րդ գոտում /ծածկագիր՝ 01-002-0106-0014, ներառված է Երևանի ավագանու 03.05.12թ. հ.446-Ն որոշման մեջ՝ 16058 տող/:

Հիմք ընդունելով ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/5769/05/22 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած վճիռը, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության դիրքորոշումը /Դ-107070-26/ և ճարտարապետության և քաղաքաշինության վարչության հ.Դ-107070-26 և Ն/75239-26 եզրակացությունները.

1.Սահմանել, որ Ավանի Աղի հանքի տարածքում գտնվող հ.96 հողամասի մակերեսը կազմում է 290.05քմ:

2.Հողամասի սահմանները որոշվում են սահմանված կարգով հաստատված հատակագծով:

3.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ